Արձանագրություն
Գեղարքունիքի մարզի Վարդաձոր համայնքի ավագանու 2017թ. Մայիսի 28-ի թիվ 3 նիստի:

Նիստին մասնակցում էին համայնքի ավագանու յոթ անդամներից վեցը՝ Աղասի Հովհաննյանը, Մամիկոն Նազարյանը, Ռուստամ Ներսիսյանը, Նորայր Սիրականյանը, Մարզպետունի Ավետիսյանը և Շմավոն Կարապետյանը, բացակայում էր Արմեն Սիրականյանը /առանց հարգելի պատճառի/:
Նիստը վարեց համայնքի ղեկավար Ռ. Սիրականյանը:
Արձանագրեց Գ.Ղազարյանը:
Օրակարգ՝
Հարց-1. Համայնքի ավագանու 2016թ. դեկտեմբերի 19-ի թիվ 35-Ն որոշումով սահմանված Վարդաձոր համայնքի ղեկավարի վարձատրության չափը փոփոխելու մասին:
Զեկուցող՝ Ռ. Սիրականյան
Հարց-2. Համայնքի ավագանու 2016թ. դեկտեմբերի 9-ի թիվ 36-Ն որոշումով սահմանված գյուղապետարանի համակարգչի օպերատորի և ջրագծի ավագ մասնագետի վարձատրությունների չափերը փոփոխելու մասին:
Զեկուցող՝ Ռ. Սիրականյան
Հարց-3. ՀՀ Կառավարության կողմից մատչելի գներով դիզելային վառելիքի, պարարտանյութերի և սերմացուների շահառուների ցուցակները հաստատելու մասին:
Զեկուցող՝ Ռ. Սիրականյան
Հարց-4 Համայնքի անդամներ Վարազդատ Գուրգենի Շահբազյանի, Արտյոմ Ռաֆայելի Մանուկյանի և Ատոմ Ռաֆայելի Մանուկյանի դիմումների քննարկումը՝ նրանց նկատմամբ հարուցված քրեական գործի մեղմացման կապակցությամբ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան ուղերձով դիմելու մասին:
Զեկուցող՝ Ռ. Սիրականյան
Վարդաձոր համայնքի ավագանին որոշեց՝
Հաստատել նիստի օրակարգը՝

Կողմ 6, դեմ չկա, ձեռնպահ չկա:

1.Մարզպետունի Ավետիսյան

2.Շմավոն Կարապետյան

3.Աղասի Հովհաննյան

4.Մամիկոն Նազարյան

5.Ռուստամ Ներսիսյան

6.Նորայր Սիրականյան

Համայնքի ղեկավար Ռոբերտ Սիրականյան

Արձանագրող Գուրգեն Ղազարյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՁՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 9-Ն

28-ը Մայիսի 2017թ. գ. Վարդաձոր

Համայնքի ավագանու 2016թ. դեկտեմբերի 19-ի թիվ 35-Ն որոշումով հաստատված Վարդաձոր համայնքի ղեկավարի վարձատրության չափը փոփոխելու մասին:

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 11-րդ կետի պահանջներով.

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Վարդաձոր համայնքի ավագանու 2016թ. դեկտեմբերի 19-ի թիվ 35-Ն որոշումով հաստատված Վարդաձոր համայնքի ղեկավարի վարձատրության չափը՝ 382000 դրամ, ուժը կորցրած ճանաչել:
2. Հիմք ընդունելով համայնքի 3035 բնակիչների թվաքանակը Վարդաձոր համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանել Ազգային ժողովի պատգամավորի պաշտոնային դրույքաչափի 52.06%-ի չափով՝ /661140 X 52.06%= 344189/ երեք հարյուր քառասունչորս հազար հարյուր ութսունինը դրամ:
3. Համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին որոշումն ուժի մեջ է մտնում 2017թ. մայիսի 1-ից:

Վարդաձոր համայնքի ղեկավար՝ Ռ. Սիրականյան

Հարցը քվեարկվեց՝

Կողմ 6, դեմ չկա, ձեռնպահ չկա:

1.Մարզպետունի Ավետիսյան

2.Շմավոն Կարապետյան

3.Աղասի Հովհանյան

4.Մամիկոն Նազարյան

5.Ռուստամ Ներսիսյան

6.Նորայր Սիրականյան

Համայնքի ղեկավար՝ Ռոբերտ Սիրականյան

Արձանագրող՝ Գուրգեն Ղազարյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՐԴԱՋՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 10-Ն

28-ը Մայիսի 2017թ. գ. Վարդաձոր

Համայնքի ավագանու 2016թ. դեկտեմբերի 9-ի թիվ 36-Ն որոշումով սահմանված գյուղապետարանի համակարգչի օպերատորի և ջրագծի ավագ մասնագետի վարձատրությունների չափերը փոփոխելու մասին

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի պահանջներով.

Համայնքի ավագանին որոշում է՝

1. ա/ Վարդաձոր համայնքի ավագանու 2016թ. դեկտեմբերի 19-ի թիվ 36-Ն որոշմամբ սահմանված համակարգչի օպերատորի սահմանված 260000դրամը ուժը կորցրած ճանաչել, 2017թ. հունիսի 16-ից:

բ/ 2017թ. հունիսի 17-ից գյուղապետարանի համակարգչի օպերատորի վարձատրության չափը սահմանել ամսեկան 156000 /մեկ հարյուր հիսունվեց հազար/ դրամ:

2. ա/ Վարդաձոր համայնքի ավագանու 2016թ. դեկտեմբերի 19-ի թիվ 36-Ն որոշմամբ սահմանված գյուղապետարանի աշխատակազմի ավագ մասնագետի սահմանված աշխատավարձը 92000 դրամ ուժը կորցրած ճանաչել 2017թ. մայիսի 31-ից,

բ/ 2017թ. հունիսի 1-ից գյուղապետարանի աշխատակազմի խմելու ջրագծի ավագ մասնագետի վարձատրության չափը սահմանել ամսեկան 128000 /մեկ հարյուր քսանութ հազար/ դրամ:

Հարցը քվեարկվեց՝

Կողմ 6, դեմ չկա, ձեռնպահ չկա:

1.Մարզպետունի Ավետիսյան

2.Շմավոն Կարապետյան

3.Աղասի Հովհանյան

4.Մամիկոն Նազարյան

5.Ռուստամ Ներսիսյան

6.Նորայր Սիրականյան

Համայնքի ղեկավար՝ Ռոբերտ Սիրականյան

Արձանագրող՝ Գուրգեն Ղազարյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 12-Ա

28-ը Մայիսի 2017թ. գ. Վարդաձոր

Համայնքի անդամներ Վարազդատ Գուրգենի Շահբազյանի, Արտյոմ Ռաֆայելի Մանուկյանի և Ատոմ Ռաֆայելի Մանուկյանի դիմումների քննարկումը՝ նրանց նկատմամբ հարուցված քրեական գործի մեղմացման կապակցությամբ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան ուղերձով դիմելու մասին

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով, լսելով Վարդաձոր համայնքի բնակիչներ Վարազդատ Գուրգենի Շահբազյանի, Արտյոմ Ռաֆայելի Մանուկյանի և Ատոմ Ռաֆայելի Մանուկյանի դիմումները կապված իրենց քրեական պատասխանատվության հետ, ինչպես նաև, որ զեկուցողը նշեց, որ նրանք՝ Վարազդատ Շահբազյանը, Արտյոմ և Ատոմ Մանուկյանները հանդիսանում են Վարդաձոր գյուղի բնակիչներ, իրենց մշտապես դրսևորել են որպես համայնքի կողմից հարգված անձնավորություններ և նրանց կողմից ոչ մի հակահասարակական դրսևորումներ չեն նկատվել, նրանք համարվում են իրենց ընտանիքների միակ կերակրողը և խնամակալը, Արտյոմ և Ատոմ Մանուկյանների հայրը՝ Ռաֆայել Մանուկյանը մահացել է 2017թ. մարտ ամսին, արարքը նրանք կատարել են ընտանիք կազմելու նպատակով և չեն գիտակցել իրենց արարքի հետևանքները.

Համայնքի ավագանին որոշում է՝

Ուղերձով դիմել ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր պարոն Յու. Իսկոյանին նրանց նկատմամբ պատիժը կիրառելիս կիրառել ՀՀ Քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը, պատիժը պայմանականորեն չկիրառել և սահմանել փորձաշրջան, որը կարդարացնի պատժի նպատակները:

Հարցը քվեարկվեց՝

Կողմ 6, դեմ չկա, ձեռնպահ չկա:

1.Մարզպետունի Ավետիսյան

2.Շմավոն Կարապետյան

3.Աղասի Հովհանյան

4.Մամիկոն Նազարյան

5.Ռուստամ Ներսիսյան

6.Նորայր Սիրականյան

Համայնքի դեկավար Ռոբերտ Սիրականյան

Արձանագրող Գուրգեն Ղազարյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՐԴԱՁՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 11-Ն

28-ը Մայիսի 2017թ. գ. Վարդաձոր

ՀՀ Կառավարության կողմից մատչելի գներով դիզելային վառելիքի, պարարտանյութերի և սերմացուների շահառուների ցուցակները հաստատելու մասին

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետի պահանջներով.

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել ՀՀ Կառավարության կողմից համայնքի անդամներին մատչելի գներով հատկացվող դիզելային վառելիքի, պարարտանյութերի և սերմացուների շահառուների ցուցակները:
2. Սույն որոշումը ուժի մեջ է ստորագրման պահից:

Հարցը քվեարկվեց՝

	Կողմ 6,	դեմ չկա,	ձեռնպահ չկա:
1.Մարգպետունի Ավետիսյան			
2.Շմավոն Կարապետյան			
3.Աղասի Հովհանյան			
4.Մամիկոն Նազարյան			
5.Ռուստամ Ներսիսյան			
6.Նորայր Միրզայանյան			

Համայնքի ղեկավար Ռոբերտ Սիրականյան

Արձանագրող Գուրգեն Ղազարյան